ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 023562330, e-mail: burastani@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2014թվականի N 9 –Ա

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետին պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Բուրաստան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման.

Բուրաստան համայնքի վարչական սահմաններում, փշալարին հարակից տարածքից 2,0 հա հողամասը համայնքի ավագանու 08.04.05թ. որոշմամբ առանձնացվել է, որպես աղբավայր և առ այսօր ծառայում է այդ նպատակին:

Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ 05.01.01.51 ծրագրի 4213 հոդվածով, տարեկան 1080.0 հազար դրամ:

Անհատ անձի՝ Երջանիկ Աբրահամյանի հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվել է պայմանագիր:

Աղբահանությունը և սանիտարական մաքրումը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանքներ են:

Բուրաստան համայնքում աղբանությունը իրականացվում է համաձայն ժամանակացույցի ամիսը չորս անգամ, շաբաթվա կիրակի օրերին: Աղբը հավաքվում է բնակիչների կողմից լցված պարկերով և փոխադրվում նախատեսված վայրը: Տարածքը բացօթյա է, աղբը չի ծածկվում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐԱՋՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԳՈ
4. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ